Ջատագովության համառոտագիր

Աջակցություն ԵՄ-Հայաստան ՀԸԳՀ-ի կիրարկմանը՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները

2025 թվականի տարեսկզբին անկախ փորձագետն անցկացրել է Հայաստանի կողմից Եվրոպական միության հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) 84-88-րդ հոդվածների կիրարկման վերաբերյալ մոնիթորինգային գնահատում՝ կենտրոնանալով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հաշվի առնման վրա: Գնահատումը հիմնված էր իրավական ակտերի վերլուծության, կառավարությանն ուղղված հարցումների և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների վրա՝ ընդգրկելով չորս հիմնական ոլորտներ՝ աղքատություն, զբաղվածություն, մասնակցություն և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն:

Հիմնական առաջարկություններ

- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը ՀԸԳՀ-ի հետ կապված բոլոր բարեփոխումներում՝ անկախ նրանից, թե տվյալ թեման որքանով է ուղղակիորեն առնչվում հաշմանդամությանը, ընդ որում՝ ցանկացած խոշոր բարեփոխման պարագայում անցկացնելով հաշմանդամություն ունեցող անձանց վրա ազդեցության ինչպես նախնական, այնպես էլ հետագա գնահատումներ:
- Ստեղծել համակարգ, որը պարբերաբար կստուգի ՀԸԳՀ-ին առնչվող օրենսդրական բարեփոխումների համապատասխանությունը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքին: Անհամապատասխանությունների դեպքում կատարել հստակ բացատրություններով փոփոխություններ՝ օրենսդրական բացերը շտկելու համար:
- Ստեղծել ըստ հաշմանդամության տեսակի, տարիքի, սեռի և տարածաշրջանի ապահովորացված տվյալների հավաքման և օգտագործման ազգային համակարգ: Օգտագործել միջազգայնորեն ընդունված գործիքներ, ինչպիսիք են Վաշինգտոնի խմբի հարցերը՝ քաղաքականության մշակման համար տվյալների օգտակարություն ապահովելու նպատակով:
- Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների ի սկզբանե ներգրավվածությունը ՀԸԳՀ-ին վերաբերող որոշումների կայացման գործընթացում: Սա նշանակում է իրական մասնակցություն աշխատանքային խմբերին, խորհրդակցություններին և հետագա գործողություններին, հատկապես, երբ խոսքը գնում է խոցելի խմբերի մասին, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող փախստականները, երեխաները և հոգեսոցիալական հաշմանդամություն ունեցող անձինք:

Ինչու՞ է սա կարևոր

Թեև Հայաստանը համապատասխան պարտավորություններ է ստանձնել ՀԸԳՀ-ի և ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակներում, քաղաքականություններում և որոշումների կայացման գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկման հարցը հաճախ բաց է մնում: Արժեքավոր տվյալների, իրական մասնակցության և բարեփոխումների նկատմամբ համապատասխան վերահսկողության բացակայության պայմաններում հաշմանդամություն ունեցող անձինք շարունակաբար բախվում են աշխատանքային, ծառայությունների և որոշումների կայացման ոլորտում խոչընդոտների: Այս բացերը խաթարում են իր պարտավորությունները կատարելու ուղղությամբ Հայաստանի ջանքերը և սահմանափակում ՀԸԳՀ-ի ներքո բարեփոխումների ազդեցությունը:

Հեղինակ՝ Մուշեղ Հովսեփյան | mushegh.hovsepian@gmail.com

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Մուշեղ Հովսեփյանը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: